այս պատճառով մահմետականները սկսեցին իրանց արգելել չարչիներին ցորեան գնելը և քաղաքից դուրս տանելը: Գնողների և արգելողների մէջ ծագեց սաստիկ կռիւ, որ փոքր էր մնում արիւնհեղութեան պիտի հասնէր:

—

ԴՈՒՐԱՑԻՑ գրում են. պ. Հ. Բաչաժբեանցը հաւաքած ունէր մօտ 100 րուբլի Վասպուրականի սովեալների անունով, բայց տակաւին չէ ուղարկել ուր որ հարկն է: Ասում են, պարոնը դիտաւորութիւն ունի յիշեալ գումարը նուիրել տեղային դպրոցին: Այդ կամայականութեան դէմ պ. պ. նուիրատուները բողոքում են, որ իրանց նուէրները հակառակ նպատակի են ծառայում:

—

Վանի վիրաւորածների համար ստացանք պ. Կ. Ն-ից 3 րուբլ: Նախկին 16 րուբլու հետ անում է 19 րուբլ:

—

ԹԻՖԼԻՍԻ հայ-աւետարանականները յանձնեցին «Մշակի» խմբագրութեանը իրանց մէջ հանգանակած 14 րուբլ յօգուտ Թիւրքաց Հայաստանի կարօտութեան: Այդ գումարը յանձնված է մեր ազատ տնօրինութեանը:

—

«Մշակի» խմբագրութեան մէջ արդէն ունենք յօգուտ Վանի վիրաւորեալների 499 րուբլ. Ցուցակները վաղը կը տպենք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

«Polit. Corresp.» լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Կ. Պօլսից:

Միտհատ-փաշայի լրագրի մէջ օրերումս տպվեցաւ մի յօդուած, որ չափազանց յարձակվում է «Times» լրագրի թղթակցի վրայ, որովհետև նա մոլորեցնում է Անգլիայի և Եւրոպայի հասարակական կարծիքը: Յօդուածի մէջ ի միջի այլոց ասված է. «Եթէ մենք հեռանանք Դուլցինիօի մէջ բռնած մեր դիրքերից և նրանց ալբանացիները գրաւեն, դրա համար պատասխանատուն ո՞վ կը լինի. Պահանջել Թիւրքաց կառավարութիւնից, որ նա ստիպէ ալբանացիներին հնազանդվել, ոչ թէ միայն անիրաւացի է, այլ կատարեալ երեխայութիւն: Ոչ թէ Բ. Դուռը, այլ չերնօգորցիները պէտք է ստիպեն ալբանացիներին հնազանդվել, իսկ եթէ սրանք անկարող են այդ գործը կատարել, ուրեմն ի՞նչի համար են ցանկանում իշխել այդ երկիրների վրայ»: Յունական խնդրի վերաբերութեամբ նոյն յօդուածի մէջ ասված է, որ ոչ թէ Թիւրքաց կառավարութիւնն է մերժում Բերլինի կոնֆերենցիայի վճիռները, այլ թիւրք ժողովուրդը, որովհետև նրանց անկարելի է ընդունել: Մի քանի ժամանակ դրանից առաջ «Թերջիւմանի-Հակիկաթ» լրագիրը ասում էր, որ Անգլիան Փոքր-Ասիայից կամենում է անգլիական նահանգ դարձնել, իսկ սուլթանին նարար, բայց թիւրքերը հասկացան անգլիացիների դիտաւորութիւնները և կարող են նրանց խանգարել: Դուցէ լրագիրը ակնարկում է քիւրդերի լեգէոնին, որի մասին նորերումս պ. Գօշէն տեղեկութիւններ հարցրեց Արեգդին-փաշայից: Այս ճանապարհով դեսպանը երբեք ճշմարտութիւն չի իմանայ: Բ. Դրան և սուլթանի այդ նոր խարդախութեան մասին Պ. Գօշէն աւելի ճշմարիտ տեղեկութիւններ կարող է ստանալ Էրզրումի և Դիարբէքիրի անգլիական հիւպատոսներից:

Նոյն «Polit. Corresp.» լրագրի դիպլօմատիական թղթակիցը գրում է Փարիզից, սեպտեմբերի 11-ից:

Ծովային ցոյցը սխալված է համարվում, որովհետև Բ. Դուռը մինչև այժմ չը կարողացաւ չերնօգորցիներին յանձնել Դուլցինիօ: Թիւրքաց կառավարութեան շրջաբերականները անօգուտ են և մինչև անգամ վնասում են նրա արժանաւորութեանը: Նրանց վրայ մինչև անգամ ուշադրութիւն չեն դարձնում: Թիւրքերից գործ են պահանջում և ոչ թէ խօսք: Թիւրքերը պէտք է առաջ զիջումն անեն և յետոյ խօսեն: Օգոստոսի 24-ին լրացաւ թիւրքերին տուած ժամանակամիջոցը: Նրանք բաւական ժամանակ ունեցան գործելու համար: Եւրոպայի չափաւորութիւնը և համբերութիւնը մեծ է, հէնց որ ֆրանսիական նաւերը կը հասնեն Ռագուզա, ծովապետները իսկոյն զինուորական խորհուրդ կը կազմեն: Ինչպէս երևում է Րիզա-փաշա այլ ևս չէ կարող Դուլցինիօ չերնօգորցիներին յանձնել: Միացեալ պետութիւնները թոյլ չեն տայ ծաղրել իրանց: Ի՞նչ կանեն թիւրքերը, երբ միացեալ նաւատորմը կերևայ Դուլցինիօի առաջ: Ասում են, որ թիւրք աստիճանաւորները հրաման են ստացել նաւատորմի երևալուն պէս թողնել քաղաքը: Ֆրանսիական ծովապետին հրաման է տուած իր պաշտօնակիցների հետ համաձայն գործել, մինչև որ նրանք ույժ գործ դնեն: Երբ ծովապետները կը դիմեն ույժին, ֆրանսիական նաւատորմի հրամանատարը պարտաւոր է տեղեկութիւն տալ ֆրանսիական կառավարութեանը իր ամեն մի գործողութեան մասին: Ֆրանսիական կառավարութիւնը չէ կամենում երկրի զինուորական ույժերից օգուտ քաղել առանց ազգային ժողովների թոյլատուութեան: Յունական խնդիրը բազմաթիւ դժուարութիւններ է ներկայացնում: Այնուամենայնիւ պետութիւնները իրաւունք չունեն Յունաստանի հետ աւելի վատ վարվել, քան թէ Չերնօգորիայի հետ: Թէ յունական և թէ չերնօգորիական խնդիրների համար պետութիւնների համաձայնութիւնը անհրաժեշտ է: Այդ համաձայնութեան անհրաժեշտութիւնը ապացուցանվում է նոյնպէս հայերի պատմութեամբ: Պետութիւնների դեսպանները իրաւացի կերպով անբաւականացուցիչ համարեցին Բ. Դրան կազմած վերանորոգութիւնների նախագիծը Հայաստանի համար: Հայկական հարցի առիթով շուտով կը յանձնվի Բ. Դրանը պետութիւնների միաձայն գրութիւնը: Անգլիական թագուհու գահական ճառը նախազգուշացնում է թիւրքերին: Եթէ թիւրքերը չեն կամենում գրական վերանորոգութիւններ մտցնել, եթէ նրանք կամենում են երկրի մէջ վարչական կամայականութիւն պահպանել և պատրաստ են իրանց կայսրութիւնը բաժանել, քան թէ քրիստոնեաներին և մահմետականներին հաւասար իրաւունքներ տալ, այս դէպքում քրիստոնեաներով բնակեցրած նահանգները կամ վարչական ինքնավարութիւն կը ստանան, կամ քրիստոնեայ նահանգապետ: Ինչպէս ներկայումս յարևելեան հարցը քրիստոնեաների հարցն է:

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները, որոնք հաղորդված են Վիէննայից, սեպտեմբերի 13-ից:

Աւստրօ-ունգարական մինիստրները շուտով կը հաւաքվեն Պեշտի մէջ, որ միասին մշակեն երկրի բիւջէտը ազգային ժողովներին ներկայացնելու համար: Պաշտօնական լրագիրները արդէն հաղորդում են, որ միայն զինուորական մինիստրի բիւջէտը հարկաւոր կը լինի մեծացնել: Ամենքին յայտնի է, թէ աւստրիական ազգային ժողովների մէջ ինչպիսի աղմուկ է բարձրանում բիւջէտը քննելու ժամանակ: Դեռ անցեալ տարի Րէյխսրատի անդամները իրաւացի կերպով բողոքում էին այն ահագին ծախսերի դէմ, որոնց պահանջում էր զինուորական մինիստրը: Պատգամաւորներից շատերը դեռ այն ժամանակ յայտնեցին, որ աւստրիացիները ճնշվում են տուրքերի ծանրութեան տակ, որ զինուորականութիւնը ծանրանում է ժողովրդի վրայ, խլելով սրա ամենալաւ աշխատող ույժերը և ահագին ծախսեր պահանջելով: «Զինուորականութիւնը, ասում էր այն ժամանակ պատգամաւորներից մէկը, քանդում է մեր հայրենիքը, կլանում է մեր աշխատած գումարները, մեծացնում է մեր պետական պարտքերը: Նա մեզ կը յուսահատացնի»: Իսկ այժմ զինուորական մինիստրը դարձեալ պահանջում է մեծացնել իր բիւջէտը: Այս բոլոր ծախսերը և զօրքերի շատացնելը պահանջում են եւրոպական խաղաղութիւնը պահպանելու անունով:

Վիէննայի պաշտօնական լրագիրները հաւատացնում են, որ աւստրօ-գերմանական դաշնակցութիւնը կապված է եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար. Իշխան Բիսմարկ երբէք այցելութիւն չէր անի Վիէննային, եթէ աչքի առաջ եւրոպական խաղաղութիւնը չունենար: Աւստրիական և Գերմանական կայսրները չէին տեսնվի Իշլի մէջ, եթէ նրանց պետական կանցլերները խաղաղասիրական քաղաքականութեան չը հետևէին: Մի խօսքով աւստրօ-գերմանական քաղաքականութիւնը ձգտում է, որ մարդիկ միմեանց հետ խաղաղ, բաղդաւոր և լաւ ապրեն: Այս պատճառով Կրուպը մեծ պատիւ ունի Գերմանիայի մէջ և գերմանացի քաղաքագէտները զօրանոցը երկաթագործութեան համար ամենալաւ ուսումնարան են համարում: Նոյն խաղաղութիւնը պահպանելու համար աւստրիական զինուորական մինիստրն էլ նոր ծախսեր է պահանջում

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Սօֆիայից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը օգոստոսի 20-ից:

Նորերումս բուլղարական իշխանը Սօֆիայից ուղևորվեցաւ Վարնա և Շումլա: Վարնայի մէջ նրան սպասում է Արևելեան Ռումելիայի պատգամաւորութիւնը: Հաւատացնում են, որ այդ պատգամաւորութիւնը, բացի իշխանին ողջունելուց, մտադիր է յայտնել նրան շատ գաղտնի գործեր: Արևելեան Ռումելիայի մէջ, ինչպէս երևում է, միութեան ցանկացող կուսակցութեան փաստաւորութիւնները չեն իրագործվում և նրանք պահանջում են, որ իշխանը օգնէ Արևելեան Ռումելիան Բուլղարիայի հետ միացնելու գործին: Այդ պարոնների յոյսերը իշխանի պատրաստականութեան վրայ չափազանցրած են: Բուլղարական իշխանը չէ սիրում արտաքին ճնշման համեմատ քաղաքականութիւնը հետևել: Որքան էլ նա ցանկանում է բուլղարական միութիւնը կատարված տեսնել, այնուամենայնիւ նա ստիպված է խոստովանել, որ այդ գործին այժմ անկարելի է ձեռնարկել: Նա այնքան խելացի է, որ գիտէ, թէ զգուշութիւնը և չափաւորութիւնը Բուլղարիայի գոյութեան միակ պայմաններն են: Ինչ տեսակ վրդովմունք էլ պատահի Արևելեան Ռումելիայի մէջ, Բուլղարիան պատահարների մէջ չի ընկնի, մանաւանդ որ բուլղարական զինուորական մինիստրը հակառակ է գործնական քաղաքականութեանը: Մինիստրի կարծիքով բուլղարական զօրքերը թէ իրանց քանակութեամբ և թէ յատկութիւններով այն դրութեան մէջ չեն, որ երկիրը կարողանայ հետևել գործնական քաղաքականութեանը: Բուլղարացին գոնեա առժամանակ շատ քիչ պիտանի է զինուորական ծառայութեան համար: Հինգհարիւրամեայ ստրկութիւնը, զինուորական յատկութեան կողմից, բուլղարացիներին ստրկութեան այն աստիճանի հասցրեց, որ նրանց կարելի կը լինի բարելաւել միայն երկար ժամանակամիջոցի ընթացքում և երկաթէ դիսցիպլինայով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԳՐԱՎՕԶԱ, 14 սեպտեմբերի: Սէյմուր, Կրեմմէր, Պինկոտի ծովապետները և Վեստուգա, Կտորա, Պալեստրօ նաւերի հրամանատարները և մի քանի անգլիացի օֆիցերներ Խելլիցօն նաւով այս գիշեր հետախուզութիւններ էին անում ալբանական ջրերի վրայ: Ֆրանսիական նաւերի հրամանատարները մնացին Գրավօզայի մէջ: Խելլիցօն վերադարձաւ Գրավօզա երեկոյեան:

Խմբ.-գիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից շուտով լոյս կը տեսնէ ԾԱՂԿԱՔԱՂ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐԻ, իբրև երգեցողութեան դասագիրք հայ դպրոցների համար: Գիրքը բաղկացած է երկու մասերից. I մասում զետեղուած են թէ տպուած և թէ մինչև այժմ մեր միւս երգարաններում անտիպ մնացած և ամեն տեղ տարածուած երգեր: II մասում մանկական երգեր: Ծաղկաքաղը այն առաւելութիւնն ունի միւս երգարաններից, որ իւր մէջ չէ պարունակում դպրոցական հասակին անվայել և անյարմար երգեր: Հեղինակներից գլխաւոր տեղերը բռնում են Նալբանդեանց, Պէշիկթաշլեան, Նարբէյ, Ցէլէկեան, Պատկանեանց, Ալիշանեան, Բարխուդարեանց, Աբովեան, Դուրեան, Հայկունի, Թաղիաթեանց, Շահազիզեանց, Դոդոխեանց, Մէջպուրեան, Այվազեանց, Թերզեան, Մելիք-Յակոբեանց, Մուրատեանց և այլն և այլն.

1—2

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ յայտնում է, որ սեպտեմբերի 21-ին կը բացվեն արհեստական և օրիորդական ուսումնարանները, իսկ սեպտեմբերի 15-ից կըսկսվեն ընդունելական քննութիւնները:

1—3

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ ԿՈՆՖԵԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒԽԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և բոլոր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՈՆՖԵԿՏԻ, և ամեն տեսակ կոնդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվին ամեն ճշտութեամբ, և խնճոյքներ ցանկացողք կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով, Въ Тифлисъ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ, НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ. փոստայի կոնֆեկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրայ եմ առնում.

Մ. Ախնազարեանց.

9—50

Дозволено цензурою Тифлисъ, 16 Сентября 1880 г. Տպարան եղբարց Դաւթեանների Типографія братьевъ Давидовыхъ